



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-5-10

Թիվ 18/ *75*
,, 01 ,, հունսի 2018թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ԴԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ .**

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք նեկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի
ղեկավարի կողմից 2018թվականի մայիս ամսվա ընդունված որոշումները և
արձակված կարգադրությունները:

Համայնքի ղեկավար՝

Ռ.Մարգարյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 6-Ա

« 02 » մայիսի 2018թ.

«ՔՊ ՄԻՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱԿԱՈՒԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԿՏԱՆԳԻ ԴԵՊՔՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ՄԱՍԻՆ


Համաձայն « ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018թ. հիմնական միջոցառումների պլան»-ի 7.1.2 կետի պահանջների, իմ ղեկավարությամբ, Արմավիր համայնքում 10.05.2018թ. անցկացվելու է շտաբային ուսումնավարություն « ՔՊ միջոցառումների կազմակերպումը հակառակորդի հարձակման վտանգի դեպքում » թեմայով:

Նշված ուսումնավարությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Ուսումնավարության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքի ՔՊ շտաբի պետին՝ Մեսրոպ Մեսրոպյանին
2. Ուսումնավարությունում ներգրավվել՝
 - համայնքի ՔՊ շտաբին,
 - համայնքի տարահանման հանձնաժողովին,
 - համայնքի ՔՊ կազմավորումների հրամանատարներին.
3. Ուսումնավարության ղեկավարի տեղակալին.
 - Համագործակցել Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ուսումնավարության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի մշակման հարցերով:
 - Մինչև 02.05.2018թ. մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարության նախապատրաստման օրացուցային պլանը:
 - Ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 07.05.2018թ. ներկայացնել հաստատման:
 - Կազմակերպել ուսումնավարության մասնակիցների նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի:
 - Ուսումնավարության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 08.05.2018թ.:
4. Սույն հրամանը հայտարարել ըստ առնչության:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ուսումնավարության ղեկավար  Ռ. Մարգարյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

„02,, մայիսի 2018թ..

N 07-Ա.

ՈՒԻՋԱՆՆԱ ՀՈԿՀԱՆՆԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՎԱԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95 հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Ռուզաննա Հովհաննեսի Սարգսյանի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ

1. 2018թվականի մայիսի 2-ից Ռուզաննա Հովհաննեսի Սարգսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ նշանակելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի «Արմավիր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղի «Արմավիր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրական կազմակերպության տնօրեն՝ Ռուզաննա Հովհաննեսի Սարգսյանի աշխատանքի չափը սահմանել՝ համաձայն հաստատված հաստիքացուցակի:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ռ. Ֆ. Մարգարյան

2018թվականի մայիսի 2

Գ. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

„ 18,,մայիսի 2018թ..

N 08-Ա

ԱՆԱՀԻՏ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱՅՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159 հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգ սահմանելու մասին» N 1384-Ն որոշումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի «<Արմավիրի առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Տեր-Հարությունյանի դիմումը:

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի «<Արմավիրի առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Տեր-Հարությունյանին տրամադրել 2018թվականի ամենամյա արձակուրդը 2018թվականի մայիսի 18-ից 22օր /20 աշխատանքային և 2 լրացուցիչ օր տևողությամբ/:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի «<Արմավիրի առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Տեր-Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2018թվականի հունիսի 20-ից:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի «<Արմավիրի առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Տեր-Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում պարտականությունների կատարումը վերապահել՝ նույն կենտրոնի բուժքույր՝ Գայանե Մանուկյանին, իսկ ընտանեկան բժշկի պարտականությունը վերապահել՝ „Ալաշկերտի ԲԱ,, ՀՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ՝ Լուսիկ Մնացականյանին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝

(Handwritten signature)

Ռ. Ֆ. Մարգարյան

2018թվականի մայիսի 18

Գ. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մայիսի 2018 թվականի N 36 -Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ԿԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին » թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Սկրտիչ Լամարկի Սիրեկանյանին պատկանող բնակելի տանը /ծածկագիր 04-020-043-021 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 20 փողոց թիվ 15 .
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ռ.Ֆ.Սարգսյան

2018 թվականի մայիսի 14
գ. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» մայիսի 2018 թվականի N 35 -Ա

ԿԵՆՑԱՂԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ԿԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Գյուլնարա Իշխանի Կնյազյանին պատկանող կենցաղի տան /ծածկագիր 04-020-065-007-004 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 1 փողոց թիվ 38/4 .
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թվականի մայիսի 03
գ.Արմավիր